Հաստատում եմ

Տնօրեն ------------ [illegible]ստանյան

«----».-----------------.2023 թ.

Ստուգված է՝

Տնօրենի տեղակալ ------------Ն.Պողոսյան

«----».-----------------.2023թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ

ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ

ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ Ք. ՎԱՆԱՁՈՐԻ

Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ N 3 ՀԻՄՆ. ԴՊՐՈՑԻ

VIա ԴԱՍԱՐԱՆԻ ԴԱՍՂԵԿ՝ ԱՐՄԻՆԵ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2023 - 24 ՈՒՍՏԱՐԻ

Создано в Scanner Mini

VI-Ա ԿՐԹԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԴԱՍՂԵԿ՝Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ

2023-24 ՈՒՍՏԱՐԻ

I ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (դասարանի ընդհանուր բնութագիրը)

VI-Ա դասարանում սովորում է 34 աշակերտ, որից 11-ը՝ աղջիկ է, 23-ը՝ տղա: Մեկ երեխա առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող / ներառական/ երեխա է՝ Ավագյան Ակսելը: Նա նախորդ ուստարի ցուցաբերել է բավարար առաջադիմություն, եղել է կարգապահ, կազմակերպված: Սովորել է իր ընդունակություններին համապատասխան:

Դասարանը համախմբված, համերաշխ. աշխույժ, ակտիվ դասարան է, համարձակ ու անկաշկանդ երեխաներ են: Մեծ խանդավառությամբ մասնակցում են կազմակերպվող թե՛ դպրոցական, թե՛ արտադպրոցական միջոցառումներին: Դասարանը կազմակերպված դասարան է, հիմնականում երեխաներն ինքնուրույն են, ցուցաբերում են լավ առաջադիմություն, չառաջադիմող աշակերտներ են Ավագյան Գոռը, Ղազարյան Արտյոմը, Հովսեփյան Դավիթը, որոնց մոտ ամեն ինչ ստացվում է մեծ դժվարությամբ, ունեն հիշողության հետ կապված խնդիր, Գոռը ունի նաև կարգապահական խնդիրներ: Հաճախակի բացակայում է Գևորգյան Կորնելիան, հիմնականում չհիմնավորված, նաև Ավետիկյան Լինան, որը ունի առողջական խնդիրներ:

Կարգապահական խնդիրներ ունեն Ավագյան Գոռը, Զուրաբյան Ալեքսը և Ստեփանյան Արամը: Կարգապահակն խնդիրները հիմնականում պայմանավորված են նրանց գերակտիվ լինելու հանգամանքով, նաև դասարանում տղաների մեծաթիվ լինելով:

Դասարանի մեկ աշակերտ՝ Նալբանդյան Սամվելը հաճախում են «Օրրան»: Նալբանդյան Սամվելը ամուսնալուծված ընտանիքի երեխա է:Միակողմանի ծնողազուրկ են Ղազարյան Արտյոմը (ընտանիքում չորս երեխա կա), Բոշյան Նարեն (ընտանիքում երեք երեխա կա), Նահապետյան Նարեկը (միակ երեխա է): Շատ են բազմազավակ ընտանիքի երեխաները:

Չկան դժվար դաստիարակվող աշակերտներ, չկան նաև բացառիկ ընդունակություններով աշակերտներ: Առաջադիմությունը բարձր է, ունենք 13 գերազանց և 9 լավ առաջադիմությամբ աշակերտներ, չառաջադիմող աշակերտներ չկան,սակայն թույլ առաջադիմություն ունեն վերը նշված 3 աշակերտները:

Создано в Scanner Mini

Իսկ նախորդ ուստարի գերազանց առաջադիմություն են ցուցաբերել հետևյալ 13 աշակերտները՝ Բասմաջյան Նունեն, Գևորգյան Ալենը, Զուրաբյան Ալեքսը, Ուռույան Սամվելը, Նհապետյան Նարեկը,Ներսիսյան Մարին, Ներսիսյան Նարեն, Սաքանյան Արմենը, Քալաշյան Լևոնը, Քոչարյան Աշոտը, Անդրեասյան Եվան, Մկրտչյան Ռաֆիկը, Ստեփանյան Արամը, իսկ լավ առաջադիմություն ունեն 9 աշակերտներ:

Ունենք տաղանդավոր ու շնորհալի մի շարք աշակերտներ, որոնք հաճախում են նկարչական, երաժշտական դպրոց, պարի, շախմատի, մեկ աշակերտ՝ սուսերամարտի:

2. Ուսումնա-դաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում

Դասագրքերի բաշխում, գրքերի, դպրոցական գույքի նկատմամբ հսկողության սահմանում, հերթապահության սահմանում: Վերահսկողություն հաճախումների նկատմամբ՝ բացակայություն, ուշացումներ: Հետևել օրագրերի վարմանը, կարգապահությանը, դասերին պատրաստ հաճախելուն: Ուշադրություն դարձնել երեխաների միմյանց նկատմամբ ունեցած հարաբերություններին, իրազեկել նրանց իրավունքների ու պարտականությունների մասին: Դասարանում ստեղծել փոխադարձ հարգանքի, ուսումնառությանը նպաստող ջերմ մթնոլորտ: Աշակերտներին ներգրավել դպրոցական, արտադպրոցական միջոցառումներին, հաճախակի զրույցներ վարել բարոյական, հայրենասիրական, գեղագիտական, հիգիենայի պահպանման, առողջ ապրելակերպի թեմաներով:

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 Հոգևոր դաստիարակություն

Պատկերացումներ տալ մարդկային գործունեության, ազգային մշակույթի, ազգային արժեքների, տարբեր ծիսակատարությունների, տոների ու հանդիսությունների մասին: Կազմակերպել զրույցներ, գրքերի, ֆիլմերի, ներկայացումների քննարկումներ, ականավոր մտավորականների ու հասարակական գործիչների հետ հանդիպումներ, էքսկուրսիաներ, դիտել կտավներ, կիրառական արվեստի գործեր, լսել երաժշտություն:

3.2 Գեղագիտական դաստիարակություն

Ծանոթացնել համաշխարհային մշակույթի նվաճումներին, մարդկային մշակույթի արժեքներին: Սովորեցնել հասկանալ շրջակա աշխարհի, բնության գեղեցկությունը: Կազմակերպել այցելություններ թանգարան, թատրոն, գեղագիտական կենտրոններ,

Создано в Scanner Mini

դիտել ֆիլմեր, լսել երաժշտություն: Կազմակերպել արշավներ, էքսկուրսիաներ դեպի ատամական վայրեր:

3.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն

Զրույցներ վարել հայրենիքի, նրա պաշտպանության շուրջ: Սովորողի մոտ զարգացնել հայ ժողովրդի ավանդույթների և հաղթանակների նկատմամբ հարգանք ուն հպարտության զգացմունք: Կազմակերպել ռազմահայրենասիրական ֆիլմերի դիտում, երգերի ունկնդրում: «Ինչից է կախված իմ ազգի և պետության ապագան» կարգախոսի արմատավորում:

3.4 Ֆիզիկական դաստիարակություն

Կազմակերպել երեխաների ֆիզիկական զարագացմանն ու առողջության պահպանմանն ուղղված միջոցառումներ՝ մրցույթներ, օլիմպիադաներ, արշավներ, էքսկուրսիաներ: Վարել զրույցներ առողջ ապրելակերպի մասին, սպորտով զբաղվելու անհրաժեշտության մասին:

3.5 Աշխատանքային դաստիարակություն

Սովորեցնել երեխաներին բարեխղճորեն, ստեղծագործաբար մոտենալ ցանկացած աշխատանքի: Զրույցներ վարել աշխատասիրության մասին, սովորեցնել ճիշտ պլանավորել օրը, ներգրավել արտադասրանային աշխատանքի մեջ: Երեխային ցույց տալ, հասկացնել, որ առանց աշխատանքի հնարավոր չէ ապրել, որ աշխատանքն է պարգևում ուրախություն, ինչպես նաև նյութական պահանջներն է բավարարվում:

3.6 Բնապահպանական դաստիարակություն

Զարգացնել պատասխանատու վերաբերմունք շրջակա միջավայրի նկատմամբ, գիտակցեն էկոլոգիապես մաքուր միջավայրում առողջ ապրելու կարևորությունը, իրազեկ լինել դրանց պահպանման ուղիներին: Զարգացնել հոգատար վերաբերմունք բուսական և կենդանական աշխարհի նկատմամբ:

4. Դպրոց-ընտանիք կապը

Ծանոթանալ աշակերտների ընտանիքների հետ, նրանց ընտանեկան պայմաններին: Ծնողներին ակտիվորեն ներգրավել դպրոցի գործունեության մեջ, բարձրացնել աշակերտի

Создано в Scanner Mini

ուսուցման արդյունքների համար ծնողի պատասխանատվությունը: Ծնողի և աշակերտի համատեղ մասնակցությամբ անցկացնել միջոցառումներ: Ծնողական ժողովների, խորհրդատվության միջոցով պահպանել մշտական կապ, անհրաժեշտության դեպքում համագործակցել հոգեբանի հետ:

Создано в Scanner Mini

ԴԱՍՂԵԿԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՏԻԿԱ

Անցկացման օրը	Դասղեկի անցկացրած միջոցառման (դասախոսություն, զրույցներ, դիտողական արշավներ, էքսկուրսիաներ և այլն) բովանդակությունը	Ծանոթություն
Սեպտեմբեր	Դասախոսություն Հայաստանի երրորդ հանրապետության մասին	
Սեպտեմբեր	Այց դեպի մոտակա պուրակ, հարգելու 44-օրյա պատերազմի զոհերի հիշատակը	
Հոկտեմբեր	Այց դեպի մոտակա հոգևոր – մշակութային կենտրոն՝ Սբ. Մարիամ Աստվածածին եկեղեցի Թարգմանչաց տոնի կապակցությամբ, բացիկների և պատի թերթի լույս ընծայում	
Հոկտեմբեր	Էքսկուրսիա դեպի Երևան	
Դեկտեմբեր	Զրույց և քննարկում երկրաշարժի և այլ բնական աղետների վերաբերյալ	
Դեկտեմբեր	Կազմակերպել և իրականացնել ամանորյան միջոցառում (ցերեկույթ)	
Հունվար	Հայոց բանակին նվիրված թեմայով ցերեկույթի կազմակերպում	
Փետրվար	Այց թատրոն	
Մարտ	Մայրության տոնին ընդառաջ ցերեկույթ	
Ապրիլ	Այց եղեռնի զոհերի հիշատակին նվիրված հուշակոթող	
Մայիս	Էքսկուրսիա պատմամշակույթային վայր	

Создано в Scanner Mini

ՈՒՍՈՒՄՆԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթներ	Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակություն	կատարման ժամկետը	Կատարողներ
1	Դասարանի ակտիվի ընտրություն, հերթապահության սահմանում, կազմակերպական հարցերի քննարկում:	սեպտեմբեր	աշակերտ դասղեկ
2	Նախորդ ուստարվա արդյունքների վերլուծում, նոր ուստարվա անելիքների ծրագրում, առաջարկությունների արկղիկի պատրաստում:	սեպտեմբեր	աշակերտ դասղեկ
3	Պատի թերթի լույս ընծայում «Աշակերտների իրավունքներն ու պարտականությունները դպրոցում» թեմայով: Նպատակն է հստակեցնել աշակերտների մոտ իրենց իրավունքները և պարտականությունները:	սեպտեմբեր	աշակերտ դասղեկ
4	«Սեպտեմբերի 21-ը անկախության օրն է»: Զրույց ՀՀ անկախության, սահմանադրության և խորհրդանիշների մասին, նպատակն է աշակերտներին ներկայացնել ՀՀ անկախացման ուղին:	սեպտեմբեր	աշակերտ դասղեկ
5	«Թարգմանչաց տոն, թե՝ ուսուցչի օր»: Զրույց, թե ով է համարվում լավ ուսուցիչ թեմայով, ինչպիսին է ուսուցչի դերը անձի ձևավորման գործում:	հոկտեմբեր	աշակերտ դասղեկ
6	«Պատասխանատու քաղաքացի» Ի՞նչ է պատասխանատվությունը, ինչ ջանքերն են հարկավոր գործադրել պատասխանատու քաղաքցի լինելու համար թեմայով զրույց:	հոկտեմբեր	աշակերտ դասղեկ
7	«Լոռվա աշխարհի էկոլոգիական հիմնախնդիրները» : Աշակերտներին հանձնարարել հավաքել տեղեկություններ Լոռվա աշխարհի ավելի	հոկտեմբեր	աշակերտ դասղեկ

Создано в Scanner Mini

	ուշագրավ էկոլոգիական խնդիրների մասին: Կազմակերպել բնապահպանական թեմայով քննարկում, ձևավորել գիտելիքներ բնապահպանության, բնական պաշարների խնայողության վերաբերյալ:		
8	«Պոլիեթիլենի տոպրակներն ու շշերը և շրջակա միջավայրը» Ասոցացնել հին և նոր դասը, տալ խնդրին նոր լուծումներ: Հանդես գալ դրանց երկրորդ կյանք տալու նախաձեռնություններով:	նոյեմբեր	աշակերտ դասղեկ
9.10	« Իմ կարողունակություններն ու ձեռքբերումները» թեմայով զրույցը հնարավորություն կտա վերհանել սովորողների շատերի կողմից չբահայտված կողմերը, իմանալ ձեռքբերումների մասին:	նոյեմբեր	աշակերտ դասղեկ
11	«Խաղաղություն»: Ի՞նչ է խաղաղությունը, կոնֆլիկտը, խաղաղության ի՞նչ խորհրդանիշներ գիտեն, ինչպե՞ս հասնել խաղաղության, խաղաղության Նոբելյան մրցանակ:	նոյեմբեր	աշակերտ դասղեկ
12	«Բնական աղետներ: Երկրաշարժ»: Ներկայացնել բնական աղետների տեսակները, առաջացման պատճառները և դրանց հետևանքները, սովորեցնել ինչպես պաշտպանվել և ինչպես ցուցաբերել առաջին օգնություն:	դեկտեմբեր	աշակերտ դասղեկ
13	« Փոխօգնություն» թեմայով քննարկում, զրույց:	դեկտեմբեր	աշակերտ դասղեկ
14	Առաջին կիսամյակի առաջադիմության, կարգապահության ու հերթապահության ամփոփում:	դեկտեմբեր	աշակերտ դասղեկ
15	«Ամանորն է մոտենում» Նվերների, բացիկների պատրաստում, փոքրիկ ցերեկույթի անցկացում:	դեկտեմբեր	աշակերտ դասղեկ
16	Երկրորդ կիսամյակում կատարվելիք աշխատանքների մասին. սովորողների կողմից առաջարկությունների քննարկում:	հունվար	աշակերտ դասղեկ

Создано в Scanner Mini

17	«Հայոց բանակ»: Բանակի կազմավորման ու կայացման ուղին, հայ նվիրյալներ: Հայ մարշալները:	հունվար	աշակերտ դասղեկ
18	«Հաշմանդամություն» Ովքեր են համարվում հաշմանդամներ, նրանց իրավունքները, մեր դերը նրանց լիարժեք զգալու գործում:	հունվար	աշակերտ դասղեկ
19	« Պատասխանատու քաղաքացի» աշակերտները այս թեմայի ուսումնասիրելուց հետո կիմանան թե ինչպես պետք է լինել պատասխանատու քաղաքացին:	փետրվար	աշակերտ դասղեկ
20	«Գիրք նվիրելու տոն» Թումանյանական օրեր	փետրվար	աշակերտ դասղեկ
21	«Օրվա ռեժիմ» Ժամանակի ճիշտ պլանավորում, առաջնային և երկրորդային գործողությունների դասակարգում:	փետրվար	աշակերտ դասղեկ
22	«Աշխատանքը ծնում է բարիքներ» Զրույց աշխատասիրության մասին, և որ այն նաև տնտեսական բարեկցության, ընկերության, հարստության հետ առնչվող հասկացություն է:	փետրվար	աշակերտ դասղեկ
23	«Երաժշտության կախարդական ուժը» Զրույց և սահիկահանդեսի ցուցադրություն հայ կոմպոզիտորների մասին:	մարտ	աշակերտ դասղեկ
24	Մարտի 8-ը կանանց միջազգային օրն է: Բացիկների, պաստառի լույս ընծայում:	մարտ	աշակերտ դասղեկ
25	«Առողջ մարմնում՝ առողջ հոգի» Զրույց առողջ ապրելակերպի մասին	մարտ	աշակերտ դասղեկ
26	«Հայաստանի յոթ հրաշալիքները՝ փոքրիկ երկրի մեծ պատմության վկաներ» Սահիսահանդեսի օգնությամբ ցուվադրել և խոսել մեր երկրի 7 խոշորագույն վանական համալիրների մասին՝ Տաթևի վանք, Նորավանք, Հաղպատ, Գեղարդ, Հաղարծին, Սևանավանք, Գոշավանք:	մարտ	աշակերտ դասղեկ

Создано в Scanner Mini

27	«Էլ ինչ կյանք առանց հումորի» Հումորը բոլորրիս կյանքում	ապրիլ	աշակերտ դասղեկ
28	«Մայր իմ անուշ ու անգին» Մայրության և զեղեցկության տոնի մասին զրույց, ծնողի նկատմամբ հարգանքի ու պատասխանատվության ձևավորում:	ապրիլ	աշակերտ դասղեկ
29	«Հերոս հայուհիներ» սահիկահանդեսի ցուցադրություն: Վեր հանել սովորողների տեսակետները հայ հասարակության մեջ կնոջ դերի մասին :	ապրիլ	աշակերտ դասղեկ
30	«Արյունոտ ապրիլ» Զրույց եղեռնի մասին, աշակերտներին ներկայացնել թուրքերի կատարած ոճրագործությունը : Նրանց մոտ սերմանել հայրենասիրություն, հույս և հավատ սեփական ուժերի հանդեպ: Այցելել եղեռնի զոհերի հիշատակը հավերժացնող հուշակոթող:	ապրիլ	աշակերտ դասղեկ
31	«Զգույշ մնա՛» Բնական գազի, էլեկտրական հոսանքի, կենցաղում օգտագործվող շատ նյութերի ոչ ճիշտ շահագործումն ու դրանցից բխող հետևանքները:	մայիս	աշակերտ դասղեկ
32	«Բարեգործություն: Միքայել Արամյանց» /Սահիկահանդես/	մայիս	աշակերտ դասղեկ
33	«Համացանցի դերն իմ կյանքում» Ապահով համացանցի մասին զրույց:	մայիս	աշակերտ դասղեկ
34	Երկրորդ կիսամյակի առաջադիմության և կարգապահության , կատարած աշխատանքների ամփոփում:	մայիս	աշակերտ դասղեկ

Создано в Scanner Mini